— Ի՞նչ պէտք է անէ, օրհնած: Մարդս մի անգամ է աշխարհ եկել, մի անգամ էլ պէտք է մեռնի, էլ մեօայ անգամաշխարհ հոյ չէ գալու: Ուրեմն, քանի կենդանի է, պէտք է ուտէ, խմէ, զոարճանայ, որովհետեւ իր դատածը գերեզման չէ տանելու:

Թաղական խորհրդի անդամի փիլիսոփայութեանը պատասխանեց իմ մօտ նստող արհեստաւորը:

— Թող զահրումար ուտէ, դրանից աւելի լաւ է: Այդ անպիտանը տասն տարուց աւելի, ջրի տիկն ուսից քարշ գցած, բոբիկ ոտներով թափառում էր Պոլսի փողոցներում եւ բաժակներով ջուր էր ծախում: Ընտանիքը տանը ուտելու հաց չունէր: Հիմա մի քանի փարայ է բերել եւ այդպէս վատնում է: Մի քանի օրից յետոյ բերածը կը հատնի, դարձեալ պարտք կանէ, դարձեալ կը գնայ Պոլիս եւ կրկին ջրի տիկը քարշ կը տայ ուսից: Իսկ ընտանիքը այստեղ կթողնէ քաղցած:

— Պոլսի փողոցներում բաժակներով ջուր ծախողը միթէ՞ այստեղ աղա է դառնում, — հարցրի ես զարմանալով:

— Այո, պարոն, — պատասխանեց դարձեալ արհեստաւորը: — Մեր քաղաքում ով որ գրպանում մի քանի ղուրուշ ունի, նա աղա է, չնայելով, թէ այդ ղուրուշները նա ինչ ցածութեամբ է վաստակել:

Անցաւ մի այլ խումբ: Առողջամիտ արհեստաւորը, ձեռքը մեկնելով դէպի մի վայելչակազմ երիտասարդ, ասաց.

— Ահա մի ուրիշ աղա էլ. դա էլ նոր է եկել. Պոլսում քիսաջի էր, այսինքն բաղանիքներում ծառայող: Պէտք է Պոլսի անբարոյական բաղանիքները տեսած լինել, պէտք է նրանց գաղտնիքներին տեղեակ լինել, որ կարելի լինի հասկանալ, թէ որքա՞ն ստոր եւ անամօթ ծառայութիւն է կատարում քիսաջին: Այստեղ մի լաւ ընտանիքից աղջիկ են տալիս այդ քիսաջուն, այդ աղային: Շուտով հարսանիք պիտի անէ: Պոլսից փողերը կծախսէ, կրկին պարտքերի տակ կընկնի եւ, մի քանի ամսից յետոյ, խեղճ կնոջը անտէր թողնելով, կրկին կը գնայ Պոլիս, կրկին կմտնէ բաղանիքը:

Հեռուից երեւաց տէր Եղիշէն:

— «Ֆարմասոնը» գալիս է, — ասացին միմեանց երեցփոխանը եւ թաղական խորհրդի անդամը:

— Ի՞նչ է «Ֆարմասոն», — հարցրի ես:

— Անհաւատ մարդ է, — պատասխանեց երեցփոխանը: — Դա մեր թաղում աղջիկների դպրոց էր բաց արել, հաւաքոեցանք, քանդեցինք: